# ՍՈՒՄԳԱՅԻԹԻՑ ԵԿԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդվել է, հունիսի 1-ի դրությամբ հանրապետությունում են գտնվում Սումգայիթից եկած 702 ընտանիք՝ թվով 2780 քաղաքացի: Նրանք ժամանակավորապես բնակվում են հանրապետության տարբեր պանսիոնատներում, ինչպես նաև իրենց բարեկամների ու ազգականների մոտ:

Հունիսի 6-ի դրությամբ լուծվել է հանրապետության տարբեր բնակավայրերում 239 ընտանիքի կամ 955 քաղաքացու մշտական բնակության հարցը:

37 ընտանիք ցանկություն է հայտնել բնակվելու Լեռնային Ղարաբաղի Ստեփանակերտ քաղաքում՝ «Հայարդգազ» արտադրական միավորման նորակառույց բնակելի շենքում:

28 ընտանիք մշտական բնակություն է հաստատելու հանրապետության Բաղրամյանի շրջանում, 24 ընտանիք հողամասեր ստանալու ցանկություն է հայտնել Աբովյանի, Նաիրիի շրջաններում սեփական տուն կառուցելու համար: Այդ նպատակով նրանց սահմանված կարգով կտրվեն երկարատև վարկեր, անհրաժեշտ շինանյութեր և կմատուցվեն վճարովի ծառայություններ:

15 ընտանիք այժմ ձևակերպում է Մասիսի շրջանից Ադրբեջանական ՍՍՀ մեկնելու ցանկություն հայտնած քաղաքացիների պետական բնակարանների և սեփական տների հետ Սումգայիթի իրենց բնակարանների փոխանակման փաստաթղթերը:

Շատ ընտանիքներ մշտական բնակության են մեկնել Լենինական, Կիրովական, Արարատ, Սևան, Արտաշատ, Սպիտակ և հանրապետության այլ քաղաքներ ու շրջկենտրոններ:

Շարունակվում են Սումգայիթից եկած քաղաքացիներին Ապարանի, Բաղրամյանի, Ախուրյանի, Գորիսի, Մեղրու շրջկենտրոններում և մյուս բնակավայրերում տեղավորելու աշխատանքները: Սեփական տներ կառուցելու համար հողամասեր են հատկացվում Հրազդանի, Աշտարակի, Աբովյանի, Նաիրիի, Մասիսի և հանրապետության այլ շրջաններում: Համապատասխան շրջսովետների ու քաղսովետների գործկոմները անհրաժեշտ օգնություն ու աջակցություն են ցույց տալիս ընտանիքների տեղավորման հետ կապված բոլոր հարցերը լուծելու, բնակարանների փոխանակումը արագացնելու, Սումգայիթ քաղաքից նրանց անձնական գույքը տեղափոխելու գործում:

Սումգայիթից եկած քաղաքացիների հարցերի քննարկման հանձնաժողովը շարունակում է իր աշխատանքը:

(Արմենպրես)